Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH



# Empowering the Armenian private sector:

## Results and Stories

# Հզորացնելով Հայաստանի մասնավոր հատվածը.

## Արդյունքներ և պատմություններ





## *Content*
## *Բովանդակություն*

*Introduction* 5
*Ներածություն*

*Supporting the wine sector in Armenia: Results and Stories* 17
*Աջակցելով Հայաստանում գինեգործության ոլորտին. արդյունքներ և պատմություններ*

*Introducing vineyard cadastre system in Armenia* 31
*Հայաստանում խաղողի այգիների կադաստրի համակարգ*

*Capacity building in winemaking and wine tourism* 35
*Կարողությունների զարգացում գինեգործության և գինու զբոսաշրջության ոլորտում*

*Promoting Armenian wines on the domestic and foreign markets* 49
*Հայկական գինիների առաջմղումը տեղական և միջազգային շուկաներում*

*Logistics Sector:Results, facts and figures* 61
*Լոգիստիկայի ոլորտ. արդյունքներ, փաստեր և թվեր*







# Introduction
# Ներածություն

# *Private Sector Development and Technical Vocational Education and Training in South Caucasus (PSD TVET) Programme implemented by GIZ*

The Private Sector Development and Technical Vocational Education and Training South Caucasus (PSD TVET) Programme is implemented by the Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH on behalf of the Federal Ministry for Economic Cooperation and Development (BMZ).

PSD TVET is a regional programme, operating in the three countries of the South Caucasus - Armenia, Azerbaijan, and Georgia. The goal of the programme is to improve the conditions for sustainable economic development and support inclusive growth particularly in rural regions.

In Armenia, the programme in cooperation with its partner ministries supports tourism, wine, IT/ engineering, and transport/logistics sectors as well as introduction of dual TVET system in Armenian VET institutions focusing on development of the regions.

The political partner of the programme in Armenia is the Ministry of Economy of the Republic of Armenia (MoE).

**To achieve the goal, the programme is operating in the following fields:**



private sector development



support for vocational education and training (VET) sector



regional development



# *GIZ-ի կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀՉ ՄԿՈՒ) ծրագիր*

GIZ-ի կողմից իրականացվող «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀՉ ՄԿՈՒ) ծրագիր «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀՉ ՄԿՈՒ) ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության՝ GIZ-ի կողմից՝ ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ:

ՄՀՉ ՄԿՈՒ-ն տարածաշրջանային ծրագիր է, որը գործում է Հարավային Կովկասի երեք երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Ծրագրի նպատակն է բարելավել կայուն տնտեսական զարգացման պայմանները և աջակցել ներառական աճին, հատկապես գյուղական շրջաններում:

Հայաստանում ծրագիրը, իր գործընկեր նախարարությունների հետ համատեղ, օժանդակում է զբոսաշրջության, գինեգործության, ՏՏ/ ճարտարագիտության և լոգիստիկայի/տրանսպորտի ոլորտներին, ինչպես նաև Հայաստանի մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություններում դուալ ՄԿՈւ համակարգի ներդրմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարածաշրջանային զարգացմանը:

Հայաստանում ծրագրի քաղաքական գործընկերն է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը:

**Այս նպատակին հասնելու համար ծրագիրը գործում է հետևյալ ոլորտներում՝**



մասնավոր հատվածի զարգացում



աջակցություն տեխնիկական և մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտի հզորացմանը



տարածաշրջանային զարգացում



**Anne-Valerie Peters,**
**GIZ PSD TVET Programme Director**

**Աննե-Վալերի Փեթերս, GIZ, ՄՀՁ ՄԿՈՒ ծրագրի ղեկավար**

As a regional programme, PSD TVET implemented by GIZ on behalf of the German Government and co-financed by the European Union, operates in three countries of the South Caucasus, applying the integrated approach to employment promotion of the German Development Cooperation: we address both supply and demand sides of the labour market, actively involving public and private partners in the design and implementation of our projects.

Through PSD TVET, we support the strengthening of the private sector – be it through technical assistance, advisory or regional exchange - and focus on involving private enterprises in VET in order to introduce dual education in the countries.
Our mission as a regional programme is also to encourage exchange of knowledge and best practices between the countries. A vivid example is the support to introduction and development of the Vineyard Cadastre System in Georgia and Armenia and the process of learning and exchange on the regional level.

I am delighted to see the prominent transformations in the selected private sector fields triggered by our joint efforts with the partners. Despite very challenging times, a lot has been achieved, which proves the determination of all the actors involved.

Գերմանիայի կառավարության պատվիրակմամբ և Եվրոպական միության համաֆինանսավորմամբ` GIZ-ի կողմից իրականացվող ՄՀՁ ՄԿՈՒ տարածաշրջանային ծրագիրը գործում է Հարավային Կովկասի երեք երկրներում՝ կիրառելով զբաղվածության խթանմանն ուղղված Գերմանիայի զարգացման համագործակցության ինտեգրված մոտեցումը. մենք անդրադառնում ենք աշխատաշուկայի թե՛ առաջարկին և թե՛ պահանջարկին` պետական և մասնավոր հատվածի գործընկերներին ակտիվորեն ներգրավելով մեր ծրագրերի մշակման և իրականացման գործում:
ՄՀՁ ՄԿՈՒ-ի միջոցով մենք աջակցում ենք մասնավոր հատվածի հզորացմանը` տեխնիկական աջակցության, խորհրդատվության տրամադրման կամ տարածաշրջանային փորձի փոխանակման միջոցով, և կենտրոնանում ենք մասնավոր ձեռնարկություններին ՄԿՈՒ-ում ներգրավելու վրա` վերոնշյալ երկրներում դուալ կրթության փորձը ներդնելու նպատակով:

Որպես տարածաշրջանային ծրագիր` մեր առաքելությունն է նաև խրախուսել երկրների միջև գիտելիքների և լավագույն փորձի փոխանակումը, որի վառ օրինակներից են Վրաստանում և Հայաստանում Խաղողի այգիների կադաստրի համակարգի ներդրմանն ու զարգացմանն ուղղված աջակցությունը և տարածաշրջանի մակարդակով գիտելիքների ու փորձի փոխանակման գործընթացը:

Ես չափազանց ուրախ եմ տեսնել, որ մեր գործընկերների հետ համատեղ ջանքերի արդյունքում մասնավոր հատվածի ընտրված ոլորտներում ակնառու վերափոխումներ են կատարվել: Չնայած բավականին ծանր ժամանակներին` շատ բան է արվել, որը վկայում է գործընթացում ներգրավված բոլոր դերակատարների վճռականության մասին:

The projects supporting private sector in Armenia – winemaking and logistics/transportation– are designed in close cooperation with our political partner, Ministry of Economy, and implementing partner Vine and Wine Foundation of Armenia, as well as other stakeholders including private sector companies, associations, international organisations, academia, and donors.

As GIZ, we are bringing and piloting innovative ideas in our projects. Consequently, we identify the existing mechanisms and systems that need to be improved and introduced in the real business environment.

Besides, our knowledge and experience in the field allow us implementing complex projects which neither the private nor the state wouldn’t otherwise be able to implement by themselves.

It is also important to mention that our state partners are involved in the design and implementation of all our projects which helps them gain knowledge and strengthen their capacities.
Over the past years, we primarily supported the winemaking sector in Armenia. However, starting from 2020 we enlarged the areas of support in the private sector, entering a new field – logistics/transportation. Thus, we have already identified the areas of possible technical assistance in this very important sector.
We can now state that our endeavours spent for every project and every activity have yielded tangible results. It is very motivating to observe these achievements leading to slow but steady transformations in the Armenian economy in general.

Հայաստանում մասնավոր հատվածին աջակցող ծրագրերը՝ գինեգործությունն ու լոգիստիկան/տրանսպորտը, մշակվել են մեր քաղաքական գործընկերոջ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ծրագրի իրականացնող գործընկեր Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի, ինչպես նաև շահագրգիռ այլ կողմերի՝ մասնավոր հատվածի ընկերությունների, ասոցիացիաների, միջազգային կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների և դոնորների հետ սերտ համագործակցությամբ:

GIZ-ում մենք նորարարական գաղափարներ ենք մշակում և փորձարկում մեր նախագծերում: Այսպիսով, մենք վեր ենք հանում և բացահայտում գոյություն ունեցող այն մեխանիզմներն ու համակարգերը, որոնք անհրաժեշտ է զարգացնել, կատարելագործել և ներդնել իրական բիզնես միջավայրում:

Բացի այդ, ոլորտում ունեցած մեր փորձը մեզ թույլ է տալիս այնպիսի բարդ նախագծեր իրականացնել, որոնք ո՛չ մասնավոր, ո՛չ էլ պետական հատվածը հակառակ դեպքում չէին կարողանա ինքնուրույն կյանքի կոչել:
Պետական հատվածի գործընկերները ներգրավված են մեր բոլոր նախագծերի մշակման և իրականացման գործում, որն օգնում է նրանց նոր գիտելիքներ ձեռք բերել և հզորացնել սեփական կարողությունները:
Վերջին տարիների ընթացքում մենք հիմնականում աջակցել ենք գինեգործության ոլորտին, սակայն 2020 թվականից սկսած՝ ընդլայնել ենք մասնավոր հատվածին ուղղված աջակցության ոլորտները՝ մուտք գործելով նոր դաշտ՝ լոգիստիկա/տրանսպորտ: Արդեն նախնական պատկերացում ունենք, թե ոլորտի որ հատվածներին է անհրաժեշտ տեխնիկական աջակցություն:
Այժմ մենք վստահաբար կարող ենք փաստել, որ յուրաքանչյուր ծրագրին և գործողությանն ուղղված մեր ջանքերը շոշափելի արդյունք են տվել: Չափազանց ոգևորիչ է ականատես լինել այս ձեռքբերումներին, որոնք հանգեցնում են Հայաստանի տնտեսության մեջ դանդաղ, բայց հաստատուն վերափոխումների:



**Aram Babayan, GIZ, PSD TVET, Team Leader Armenia**

**Արամ Բաբայան, GIZ, ՄՀՉ ՄԿՈՒ, Հայաստանյան թիմի ղեկավար**



**Sirvard Amatuni, GIZ, PSD TVET, Programme Expert**

**Սիրվարդ Ամատունի,**
**GIZ, ՄՀԶ ՄԿՈՒ, Ծրագրի փորձագետ**

Armenian winemaking has seen impressive growth over the past decade. On the one hand, the increasing number of new brands and producers with innovative approaches and culture breathed new life to the ancient winemaking traditions of the country. On the other hand, large-scale investments in modernisation of production processes integrated with the best practices from international experts working in the country enhanced the Armenian wine quality. This, indeed, led to recognition of Armenia as an emerging wine tourism and winemaking destination.

However, the sector is still negatively impacted by several challenges starting from inconsistent grape quality to the need for promotion and visibility of Armenian wines locally and internationally.

Our programme has been supporting the winemaking sector for over 10 years in Armenia. These years have been marked with the “Renaissance” of Armenian winemaking both in terms of the growing number of wine producers and enhanced quality of Armenian wines on the whole.

PSD TVET Programme has been standing by the sector to tackle these challenges together with state and private partners. We have taken efforts to support positioning of Armenia as a country not only with rich winemaking traditions and culture but one producing high-quality and competitive wines on the global scale.

All the projects and activities of PSD TVET in the wine sector have been designed jointly with state and private stakeholders to contribute to this ambitious goal directly or indirectly.

Վերջին տասնամյակում Հայաստանում գինեգործության ոլորտը տպավորիչ աճ է գրանցել: Մի կողմից, նորարարական մոտեցումներով և մշակույթով հագեցած նոր բրենդների ու արտադրողների աճող թիվը նոր շունչ է հաղորդել երկրի գինեգործական հազարամյա ավանդույթներին: Մյուս կողմից, արտադրական գործընթացների արդիականացմանն ուղղված լայնածավալ ներդրումները՝ միջազգային փորձագետների լավագույն փորձի համադրությամբ, բարձրացրել են հայկական գինու որակը: Սա, իսկապես, հանգեցրել է նրան, որ Հայաստանը ճանաչվի որպես գինու զբոսաշրջության և գինեգործության զարգացող ուղղություն:

Այդուհանդերձ, ոլորտի վրա դեռևս շարունակում են բացասաբար ազդել մի շարք մարտահրավերներ՝ սկսած խաղողի անհամապատասխան որակից մինչև տեղական և միջազգային մակարդակում հայկական գինիների առաջմղման և տեսանելիության բարձրացման անհրաժեշտությունը:
Մեր ծրագիրը Հայաստանում գինեգործության ոլորտին աջակցում է ավելի քան 10 տարի: Այս տարիները նշանավորվել են՝ որպես հայկական գինեգործության «Վերածնունդ»՝ թե՛ գինի արտադրողների թվի աճի, թե՛ ընդհանուր առմամբ հայկական գինիների որակի բարձրացման տեսանկյունից:
ՄՀԶ ՄԿՈՒ ծրագիրը կանգնած է եղել ոլորտի կողքին՝ պետական և մասնավոր գործընկերների հետ համատեղ այդ մարտահրավերներին դիմակայելու պատրաստակամությամբ: Մենք ջանքեր ենք գործադրել՝ աջակցելու Հայաստանի դիրքավորմանը ոչ միայն որպես գինեգործության հարուստ ավանդույթներ և մշակույթ ունեցող, այլև համաշխարհային մասշտաբով բարձրորակ և մրցունակ գինի արտադրող երկիր:
Գինու ոլորտում ՄՀԶ ՄԿՈՒ-ի բոլոր ծրագրերն ու գործողությունները մշակվել են պետական և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի հետ համատեղ՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստելով այս հավակնոտ նպատակի իրականացմանը:

# *PSD TVET's key results in private sector development for 2019 - 2021*

**Number of people who gained more hours of work as a result of the programme's activities**

Ծրագրի գործողությունների արդյունքում հավելյալ զբաղվածություն ձեռք բերած մարդկանց թիվը




**Number of people with improved income as a result of the programme's activities**

Ծրագրի գործողությունների արդյունքում ավելի բարձր եկամուտ ստացողների թիվը






# *2019 – 2021թթ ծրագրի գրանցած հիմնական արդյունքները մասնավոր հատվածի զարգացման ոլորտում*

**Number of people with improved rural income as a result of the programme's activities**

Ծրագրի գործողությունների արդյունքում գյուղական համայնքներում ապրող ավելի բարձր եկամուտ ստացողների թիվը




**Number of people employed as a result of the programme's activities**

Ծրագրի գործողությունների արդյունքում աշխատանքով ապահովվածների թիվը



**_Supporting the wine sector in Armenia:_**
_Results and Stories_

**_Աջակցելով Հայաստանում գինեգործության ոլորտին._**
_արդյունքներ և պատմություններ_



# *Promoting wine tourism as a new business model*

Over the years of implementing projects in the winemaking and wine tourism fields through PSD TVET Programme, GIZ identified several major gaps in the field. One of them is the lack of alternative income sources for small-scale homemade winemakers. Apart from growing grapes and selling them, they did not have any other means to sustain their households and no services were available on the market to fill in these gaps.
For this reason, PSD TVET piloted wine tourism support projects simultaneously in 2 regions – Tavush and Vayots Dzor.






# *Գինու զբոսաշրջության խթանումը՝ որպես նոր բիզնես մոդել*

ՄՀԶ ՄԿՈՒ-ի միջոցով գինեգործության և գինու զբոսաշրջության ոլորտներում ծրագրերի իրականացման տարիներին GIZ-ը հայտնաբերել է ոլորտի հիմնական բացերը: Դրանցից մեկը փոքր ծավալներով գինի արտադրող տնայնագործների համար եկամտի այլընտրանքային աղբյուրների բացակայությունն է: Խաղող աճեցնելուց և վաճառելուց բացի, նրանք եկամտի այլ աղբյուր չունեին, իսկ շուկայում առկա չէին այդ բացը լրացնող ծառայություններ:
Այդ իսկ պատճառով, ՄՀԶ ՄԿՈՒ-ն մեկնարկեց գինու զբոսաշրջությանն աջակցող պիլոտային երկու նախագիծ միաժամանակ երկու՝ Տավուշի և Վայոց ձորի մարզերում:



# *Projects in Vayots Dzor: Wine Cube “Momik”*

Wine Cube is an innovative wine tourism business model in Armenia: it is a tasting facility in the heart of a vineyard based on “farm-to-bottle” concept. Wine Cube allows introducing a more flexible and effective mechanism for wine production and promotion.

The first Wine Cube, “Momik”, is located in the Areni village of Vayots Dzor region of Armenia. The grapes are grown by the farmer – owner of “Momik” Nver Mnatsakanyan – while the wine production is outsourced to a professional winemaking company- Wine Works. “Momik” wines are served personally by the owners combined with local food, and accompanied by masterclasses in stone-carving held by Nver’s wife Narine.

“We are so grateful to GIZ and all the partners within this large cooperation project - One Armenia NGO, vinification service provider WineWorks, tour operators and other international donors for the contribution and technical support. Thanks to their efforts, we went from selling grapes to having our own brand, Momik wine, and a tasting room. Of course, my wife and I were planning to expand our vineyard long before this project, but it was GIZ and the partners’ support that made it possible for us to achieve the goal we had been working towards for years. Besides, we have managed to increase our homemade wine quality to be able to bottle and sell it in wine stores”.



Having hosted already 500 tourists in 2019, the Wine Cube will serve as a model for wine tasting facilities in other wine tourism destinations in Armenia. Over 2021, in the post-lockdown reality, Momik welcomed 400 visitors; the owner expects this figure to be doubled in 2022.



# *Նախագծեր Վայոց ձորում. «Մոմիկ» գինու համտեսի սրահ*

Գինու համտեսի սրահը՝ Wine Cube-ը, գինու զբոսաշրջության նորարարական բիզնես մոդել է Հայաստանում. այն տեղակայված է խաղողի այգու հենց սրտում և հիմնված է «խաղողի այգուց մինչև գինի» հայեցակարգի վրա: Գինու համտեսի սրահը ներկայացնում է գինու արտադրության և խթանման ավելի ճկուն ու արդյունավետ մեխանիզմ:
Այս ձևաչափով ստեղծված առաջին համտեսի սրահը՝ «Մոմիկը», գտնվում է Վայոց ձորի մարզի Արենի գյուղում: Խաղողն աճեցնում է «Մոմիկ»-ի սեփականատեր Նվեր Մնացականյանը, իսկ գինու արտադրության գործընթացը կազմակերպվում է աութսորսի սկզբունքով՝ Wine Works խորհրդատվական ընկերության միջոցով: «Մոմիկ»-ում գինիները մատուցում են անձամբ սեփականատերերը և զուգորդում տեղական սննդի հյուրասիրությամբ ու քարի փորագրության վարպետության դասերով, որոնք վարում է Նվերի կինը՝ Նարինեն:

«Մենք անչափ երախտապարտ ենք GIZ-ին և համագործակցային այս խոշոր ծրագրի բոլոր գործընկերներին՝ One Armenia ՀԿ-ին, գինեգործական ծառայություններ մատուցող Wine Works-ին, տուրօպերատորներին և միջազգային այլ դոնորներին՝ իրենց մասնակցության և տեխնիկական աջակցության համար: Նրանց ջանքերի շնորհիվ է, որ խաղողի վաճառքից անցում կատարեցինք մեր սեփական բրենդի՝ «Մոմիկ» գինիների և համտեսի սրահի ստեղծմանը: Իրականում ես և կինս պլանավորում էինք ընդլայնել մեր խաղողի այգիները նախքան այս նախագծի մեկնարկը, բայց GIZ-ի և գործընկերների աջակցության շնորհիվ էր միայն, որ հասանք մեր երկարամյա այս նպատակին: Ավելին, մեզ հաջողվել է բարձրացնել մեր տնական գինու որակը և մենք կարող ենք այն շշալցնել ու վաճառել գինու խանութներում»:
Ակնկալվում է, որ «Մոմիկը» մոդել կծառայի Հայաստանի այլ գինեգործական շրջանների գինու համտեսի սրահների համար: 2019 թվականին այն հյուրընկալել է ավելի քան 500 զբոսաշրջիկի, իսկ 2021 թվականին՝ հետկարանտինային շրջանում, 400 այցելուի. սեփականատերն ակնկալում է, որ 2022 թվականին այս ցուցանիշը կկրկնապատկվի:

**500**
**tourists**
**զբոսաշրջիկ**
**2019**

# *Projects in Vayots Dzor: Improvement of homemade wine quality and its commercialisation*

To develop viticulture, wine production and related services in Vayots Dzor region, PSD TVET joined efforts with Vine and Wine Foundation of Armenia and Young Winemakers' Union NGO over 2018-2019. The project was aimed at increasing small-scale homemade wine producers' and farmers' knowledge and capacities in grape growing, winemaking and sales through improvement of the production cycle, storage, and bottling processes.

As a result, 15 homemade winemakers in Areni village and 2 more in Aghavnadzor villages have been consulted (the latter were supported by ACBA Federation).

2 of the winemakers were consequently chosen for the Gastro Yards project by UNDP to start providing wine tourism services as a result.

Hayk Stepanyan, homemade winemaker from Areni village

***I have been working with GIZ since 2017, and I have received continuous and strong support to date. At first, we made wine with traditional methods, mainly focusing on the local market. However, with this support we grew a lot to expand our target market significantly.***

**15**
**տնայնագործ գինեգործներ**

**Areni village**
**Արենի գյուղ**



# *Նախագծեր Վայոց ձորում. տնական գինու որակի բարելավում և դրա առևտրայնացում*

Վայոց ձորի մարզում խաղողագործությունը, գինեգործությունը և հարակից ծառայությունները զարգացնելու նպատակով ՄՀԶ ՄԿՈՒ-ն 2018-2019 թվականներին միավորել է ջանքերը Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և «Երիտասարդ գինեգործների միություն» ՀԿ-ի հետ: Ծրագրի նպատակն էր զարգացնել փոքր ծավալներ արտադրող տնայնագործ գինեգործների և ֆերմերների գիտելիքներն ու կարողությունները խաղողի աճեցման, գինեգործության և վաճառքների ոլորտում՝ արտադրական ցիկլի, գինու պահման և շշալցման գործընթացների բարելավման միջոցով:

Արդյունքում, խորհրդատվություն են ստացել Արենի գյուղի 15 և Աղավնաձորի գյուղի 2 տնայնագործ գինեգործներ (վերջիններիս աջակցել է ԱԿԲԱ Ֆեդերացիան): Գինեգործներից 2-ը հետագայում ՄԱԶԾ-ի կողմից ընտրվել են «Գաստրոբակ» նախագծի համար, որի արդյունքում սկսել են գինու զբոսաշրջության ծառայություններ մատուցել:

**2**
**տնայնագործ գինեգործներ**

**Aghavnadzor village**
**Աղավնաձոր գյուղ**

*Հայկ Ստեփանյան, տնայնագործ գինեգործ Արենի գյուղից*

***GIZ-ի հետ առաջին անգամ աշխատել եմ 2017 թվականին և մինչ օրս ստացել եմ լայնածավալ աջակցություն: Մենք ի սկզբանե մեր գինին ստեղծում էինք ավանդական տարբերակով, որն ավելի կենտրոնացած էր նեղ թիրախային խմբի ուղղությամբ, սակայն այս աջակցության շնորհիվ կարողացանք զգալիորեն ընդլայնել այդ թիրախային խումբը:***

# *Projects in Tavush: Support to CARD's Vine and Wine Service Centre*

In 2019, PSD TVET supported establishment of Vine and Wine Service Centre in Achajur, Tavush marz, in cooperation with CARD Foundation, USAID and SMEDNC. As a result:

- for the first time in Tavush, 10 homemade winemakers were selected and consulted to improve wine quality and offer new wine tourism products
- family businesses were provided with vinification services;
- 3 of 10 businesses have later been selected by UNDP for the "Gastro Yard" project.

  Overall, around 300 farmers have benefited from the general services of the centre as of 2019.






# *Ծրագրեր Տավուշում. Աջակցություն CARD-ի խաղողագործության և գինեգործության սպասարկման կենտրոնին*

2019 թվականին ՄՅՁ ՄԿՈՒ-ն՝ CARD հիմնադրամի, ԱՄՆ ՄԶԳ-ի և ՓՄՁ ԶԱԿ-ի հետ համատեղ, աջակցել է Տավուշի մարզի Աչաջուր համայնքում խաղողագործության և գինեգործության սպասարկման կենտրոնի ստեղծմանը: Արդյունքում՝

- Տավուշում առաջին անգամ ընտրվել և խորհրդատվություն են ստացել 10 տնայնագործ գինեգործներ՝ գինու որակը բարելավելու և գինու զբոսաշրջային նոր պրոդուկտներ առաջարկելու նպատակով:
- Ընտանեկան բիզնեսներին մատուցվել են գինեգործական ծառայություններ:
- 10 բիզնեսից 3-ը հետագայում ընտրվել են ՄԱԶԾ-ի կողմից «Գաստրոբակ» նախագծի համար:

  2019 թվականի դրությամբ կենտրոնի ծառայություններից օգտվել է շուրջ 300 ֆերմեր:



# *Further support for wine tourism: Branding and bottling for homemade winemakers*

In 2019, as a result of a blind tasting contest, 10 companies out of 20 small producers from different regions have been selected for further developing wine tourism products in cooperation with Vine and Wine Foundation of Armenia.

To ensure sustainability of the products especially in times of the COVID-19 pandemic affecting both wine production and tourism, GIZ supported development of brand identities for these producers to be able to sell bottled wine in specialised stores and supermarkets (instead of formerly sold bulk wine). The wine producers were also consulted during the bottling process.

Having a brand identity and wine label is a must for meeting the local and international standards for selling bottled wine, having access to specialised wine bars, shops, and online e-commerce platforms.

Through PSD TVET, the wine producers presented and promoted their bottled wines during Areni Wine Festival and Spirit of Armenia Festivals.

*Davit Avetisyan, homemade winemaker, Berkri wines*

***The knowledge I received from working with professional winemakers within GIZ projects has played a tremendous and important role in terms of the quality that we have now. We have gained a lot of momentum thanks to this support and my only wish is to go even farther.***

*Alexan Nersisyan, Kinea homemade winemaker*

***Through all the various workshops on wine quality and wine branding, GIZ's continuous support has been vital in the development process of "Kinea" brand.***



# *Հետագա աջակցություն գինու զբոսաշրջությանը. տնայնագործ գինեգործների արտադրանքի բրենդավորում և շշալցում*

2019 թվականին կույր համտեսի մրցույթի արդյունքում տարբեր մարզերի 20 փոքր արտադրողներից ընտրվել են 10 ընկերություններ՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի հետ համագործակցությամբ գինու զբոսաշրջության պրոդուկտներ զարգացնելու համար:

Պրոդուկտների կայունությունն ապահովելու նպատակով, մասնավորապես՝ COVID-19 համավարակի ժամանակ, որն ազդում է ինչպես գինու արտադրության, այնպես էլ զբոսաշրջության վրա, GIZ-ն աջակցել է այս արտադրողների համար սեփական բրենդների մշակմանը, որպեսզի նրանք կարողանան շշալցված գինի վաճառել գինու խանութներում և սուպերմարկետներում՝ պլաստիկե տարաների մեջ վաճառելու փոխարեն: Արտադրողները խորհրդատվություն են ստացել նաև շշալցման ընթացքում:

Սեփական բրենդ և գինու պիտակ ունենալը պարտադիր է շշալցված գինու վաճառքի տեղական և միջազգային չափանիշներին համապատասխանելու, մասնագիտացված գինու բարերին, խանութներին և առցանց էլեկտրոնային առևտրի հարթակներին հասանելիություն ունենալու համար:
ՄՀՁ ՄԿՈՒ-ի միջոցով գինու արտադրողներն իրենց շշալցված գինիները ներկայացրել և գովազդել են Spirit of Armenia և Արենի գինու փառատոնների ընթացքում:

Դավիթ Ավետիսյան, տնայնագործ գինեգործ, Berkri գինիներ

***GIZ-ի նախագծերի շրջանակում պրոֆեսիոնալ գինեգործների գիտելիքները և աշխատանքային փորձի փոխանակումը շատ մեծ դեր է խաղացել մեր գինու ներկայիս որակը ստանալու պրոցեսում: Այս աջակցության շնորհիվ մենք մեծ թափ ենք հավաքել, և իմ միակ ցանկությունն էլ ավելի հեռու գնալն է:***

Ալեքսան Ներսիսյան, տնայնագործ գինեգործ, Kinea գինիներ

***GIZ-ի շարունակական աջակցությունը՝ գինու որակի բարելավմանն ու բրենդավորմանն ուղղված բազմաթիվ վերապատրաստումների միջոցով, կենսական նշանակություն է ունեցել Kinea գինու բրենդի զարգացման գործընթացում:***


BERKRI
BERKRI
AKNA
red dry wine
KRYA
Stepanyan
Stepanyan
TANAHAT
ARENI
red dry wine
KinEa
KinEa
YEGANYANS
Arctur
Arctur



*Introducing vineyard cadastre system in Armenia*

*Հայաստանում խաղողի այգիների կադաստրի համակարգ*

PSD TVET in cooperation with VWFA supported elaboration of the concept for introduction of vineyard cadastre system (VCS) in Armenia formerly lacking a comprehensive database on vineyards. It was done through involvement of international and regional expertise from Portugal and Georgia. Vineyard Cadastre System (VCS) Implementation Concept was ultimately handed over to the VWFA for further execution.

The VCS is a critical tool for monitoring, controlling and traceability of grape quantity and quality. Ultimately, the VCS aims to host a comprehensive database for viticulturists, policy makers and the private sector.

The system will be regularly updated with information on grape varieties, quantity, cultivation practices like grape planting, harvest processing and storage, and commercial sales or resale of grapes.
During the first implementation phase in 2020, the satellite shootings and creation of the comprehensive database were carried out. The first pilots were implemented for the regions of Armavir, Aragatsotn, and Ararat to further expand to other winemaking regions of Armenia.

However, the exchange of regional and international practice is ongoing. In 2022, the programme will again involve an international expert for selection of the software and creation of mechanisms to update the existing data.





ՄՀՉ ՄԿՈՒ-ն՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի հետ համագործակցությամբ, աջակցել է Հայաստանում խաղողի այգիների կադաստրի համակարգի ներդրման հայեցակարգի մշակմանը՝ ներգրավելով Պորտուգալիայի և Վրաստանի փորձը: Նախկինում խաղողի այգիների վերաբերյալ համապարփակ տվյալների բազան բացակայում էր: Համակարգի ներդրման հայեցակարգն ավելի ուշ հանձնվել է Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին՝ հետագա իրականացման համար:

Խաղողի այգիների կադաստրի համակարգը խաղողի քանակի և որակի մոնիտորինգի ու վերահսկման կարևոր գործիք է: Համակարգի վերջնական նպատակն է ստեղծել համապարփակ տվյալների բազա խաղողագործների, պետական և մասնավոր հատվածների համար:

Համակարգում պարբերաբար կթարմացվեն խաղողի սորտերի, քանակի, մշակության վերաբերյալ տեղեկությունները, ինչպիսիք են խաղողի տնկումը, բերքահավաքի կազմակերպումը և մթերումը, ինչպես նաև խաղողի վաճառքը կամ վերավաճառքը:
2020 թվականին՝ ծրագրի իրականացման առաջին փուլի ընթացքում, արբանյակային նկարահանումների արդյունքում ստեղծվել է տվյալների համապարփակ բազա: Պիլոտային առաջին ծրագրերը ներառել են Արմավիրի, Արագածոտնի և Արարատի մարզերի տվյալները: Ակնկալվում է հետագայում Հայաստանի գինեգործական մյուս շրջանների տվյալները ևս ընդգրկել:

Այս ուղղությամբ տարածաշրջանային և միջազգային փորձի փոխանակումը շարունակվում է: 2022 թվականին ծրագիրը կրկին նախատեսում է միջազգային փորձագետի ներգրավում, որը կաջակցի ծրագրային ապահովման համակարգի ընտրությանն ու առկա տվյալների թարմացման մեխանիզմների ստեղծմանը:





*Capacity building in winemaking and wine tourism*

*Կարողությունների զարգացում գինեգործության և գինու զբոսաշրջության ոլորտում*

## *Development and holding of “Wine Tourism Guide” training course*

Wine tourism has seen significant growth over the past 5 years in Armenia. However, the country still has a large untapped potential in the field. The recent revival of the wine sector, establishment of small boutique wineries and improvement of the wine quality as well as the increasing number of tourists are creating excellent opportunities for wine tourism in Armenia.

On the one hand, the number of tourists visiting the country and particularly showing interest in wine tourism products is growing. As wine tourism products are transforming into more complex ones, the role of wine tour guides as important links between tourists, wine producers, and other players of the industry is becoming more prominent.

Therefore, there was an urgent need to systematise and improve the knowledge base on winemaking and wine tourism products to improve Armenia’s image as a wine producing and wine tourism destination.

To fill in this gap, GIZ in close cooperation with Vine and Wine Foundation of Armenia and Tourism Committee designed Wine Tour Guide project. Implemented by ICARE Foundation, the project resulted in development of a comprehensive training course including modules on Communication and Guiding Techniques, History of Armenian Winemaking, Geography, Viticulture and Winemaking.

Consequently, 20 tour guides have been trained and certified as Wine Guides to professionally serve the industry needs. The certification will be recognised by the state and private sector as an official trademark of quality.
The results of the pilot have been revised for future rounds of trainings.





## *Գինու զբոսավարների վերապատրաստման դասընթացի մշակում և անցկացում*

Գինու զբոսաշրջությունը (կամ Էնոտուրիզմը) Հայաստանում զգալի աճ է գրանցել վերջին 5 տարիների ընթացքում: Այդուհանդերձ, երկիրը դեռ չօգտագործված մեծ ներուժ ունի այս ոլորտում: Գինեգործության ոլորտի վերջին աշխուժացումը, փոքր բուտիկ գինեգործարանների հիմնումն ու գինու որակի բարելավումը, ինչպես նաև զբոսաշրջիկների թվի աճը հիանալի հնարավորություններ են ստեղծում Հայաստանում գինու զբոսաշրջության զարգացման համար:

Մյուս կողմից, աճում է Հայաստան այցելող և հատկապես գինեգործական արտադրանքի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող զբոսաշրջիկների թիվը: Քանի որ գինու զբոսաշրջությունը դառնում է համալիր զբոսաշրջային պրոդուկտ, գինու զբոսավարների դերն էլ ավելի է կարևորվում՝ որպես կապող օղակ զբոսաշրջիկների, գինի արտադրողների և ոլորտի այլ խաղացողների միջև:
Հետևաբար, անհրաժեշտ էր համակարգել ու կատարելագործել նաև գինու և գինու զբոսաշրջային պրոդուկտների վերաբերյալ գիտելիքների բազան, որը կնպաստեր Հայաստանի դիրքավորմանը որպես գինեգործական և գինու զբոսաշրջային երկիր:

Այս բացը լրացնելու համար GIZ-ը՝ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի հետ սերտ համագործակցությամբ, մշակել է Գինու զբոսավարների վերապատրաստման նախագիծը: ICARE հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի արդյունքում մշակվել է համապարփակ վերապատրաստման դասընթաց, որը ներառել է առանձին առարկաներ հաղորդակցության և զբոսավարության տեխնիկաների, հայկական գինեգործության պատմության, աշխարհագրության, խաղողագործության և գինեգործության վերաբերյալ:
Արդյունքում, 20 զբոսավարներ վերապատրաստվել և հավաստագրվել են որպես գինու պրոֆեսիոնալ զբոսավարներ, որոնք կարող են սպասարկել ոլորտի կարիքները: Հավաստագրումը պետական և մասնավոր հատվածների կողմից կճանաչվի որպես որակի պաշտոնական նշան:
Պիլոտային ծրագրի արդյունքները վերանայվել և հիմք են ընդունվել՝ վերապատրաստման հետագա փուլերի համար:



*Nana Tairyan, tour guide involved in the project:*

***Formerly, we were interested in wine and winemaking, participated in various seminars and workshops on wine production and wine history. However, with this project we started reflecting on our knowledge once the information we received was 'systemised.' It helped us gain and establish our base knowledge, which gives us a clear vision of the direction we will be moving to.***





Զբոսավար Նանա Թաիրյան, նախագծի մասնակից

***Նախկինում մենք հետաքրքրված էինք գինեգործության պատմությամբ ու գինեգործությամբ, մասնակցել էինք թեմատիկ բազմաթիվ սեմինարների, սակայն մեր գիտելիքների զարգացումը սկսեցինք զգալ միայն այս նախագծի շրջանակում, երբ այդ գիտելիքները մեզ համակարգված կերպով ներկայացվեցին: Ստացած գիտելիքների շնորհիվ մենք կարողացանք հասկանալ, թե որտեղ ենք տվյալ պահին գտնվում և որ ուղղությամբ ենք շարժվում:***

# *Further support to EVN Wine Academy's "Oenology and Wine Business" programme*

**Establishment of a Practical Training Centre**

In 2019, PSD TVET supported establishment of a practical training centre within Voskehat Educational and Scientific Center of Enology of the Armenian National Agrarian University (ANAU).

With the technical support of the programme, Educational and Scientific Centre now houses a Micro-Vinification Training Center of ICARE's EVN Wine Academy, enabling students to work on their own wine project from pruning to bottling and conduct research projects with Armenian autochthon varieties.



*Gohar Gharibyan, EVN Wine Academy Graduate*

***I always had a dream to create my own wine production, and I specifically wanted to present something new to the market, which is not an easy thing to do. I had another goal of studying at the EVN Wine Academy. When I finally applied to EVN Wine Academy, I did not realise at the time how important its role would be in the pursuit of my dream. I believe it gave me the strong foundation that I really needed to move forward.***



# Հետագա աջակցություն «Ի-Վի-Էն» գինու ակադեմիայի «Գինեգործություն և գինու բիզնես» ծրագրին

**Հետագա աջակցություն «Ի-Վի-Էն» գինու ակադեմիայի «Գինեգործություն և գինու բիզնես» ծրագրին Գործնական ուսուցման կենտրոն**

2019 թվականին ՄՅՁ ՄԿՈՒ-ն աջակցել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնում գործնական ուսուցման կենտրոնի ստեղծմանը: Ծրագրի տեխնիկական աջակցության շնորհիվ, ուսումնագիտական կենտրոնում այժմ գործում է ICARE-ի «Ի-Վի-Էն» գինու ակադեմիայի Միկրոգինեգործության ուսումնական կենտրոնը, որն ուսանողներին հնարավորություն է տալիս աշխատել գինու սեփական նախագծերի վրա՝ էտումից մինչև շշալցում, և հետազոտական նախագծեր իրականացնել հայկական տեղածին սորտերի հետ:



*Գոհար Ղարիբյան, «Ի-Վի-Էն» գինու ակադեմիայի շրջանավարտ*

***Ես միշտ երազել էի սեփական գինու արտադրություն ունենալու մասին, հատկապես ցանկանում էի շուկային ներկայացնել նոր, յուրահատուկ ապրանք, ինչը բավականին բարդ էր: Ես նաև երկար ժամանակ ցանկանում էի ընդունվել «Ի-Վի-Էն» գինու ակադեմիա, և երբ վերջապես ընդունվեցի, դեռևս չէի գիտակցում, թե որքան կարևոր դեր էր խաղալու այն երազանքիս իրականացման ճանապարհին: Հենց ակադեմիայում ստացած գիտելիքներն են ինձ թույլ տվել էլ ավելի առաջ գնալ:***

## *Wine Incubation Project: Joining efforts with EPIC Programme for employment opportunities for Syrian Armenians and local women*

The Wine Incubation Project is an example of successful cooperation between two programmes implemented by GIZ in the field of economic development and employment.

The project objective was to identify and develop capacities in wine production and wine business among Syrian Armenians, thus, fostering their integration into the field. The project included 2 main phases spanning over 1.5 years: acquiring the theory and practice of winemaking and wine production and the incubation of new wines accompanied with individual on-the-job training for each participant.

In the first phase of the project, 22 participants have been provided with a solid theoretical background on wine production and wine business through attending the “WINMASTER” intensive training course developed and delivered by the ICARE’s EVN Wine Academy. “WINMASTER” course has been designed on the basis of “Oenology and Wine Business” certificate programme developed with the support of PSD TVET.

The second phase included incubation of the individual wine projects for the most successful 6 participants of “WINMASTER” training course. In the initial stage of the incubation phase individual wine project concepts have been developed for each participant with the support of Wine Formula LLC. The wine incubation itself has been implemented at Armenian National Agrarian University’s Voskehat Educational and Research Center of Oenology.






## *Գինու ինկուբացիայի նախագիծ.մեկտեղելով ջանքերը «Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում» (EPIC) ծրագրի հետ*

Գինու ինկուբացիայի նախագիծը GIZ-ի կողմից կայուն տնտեսական զարգացման և զբաղվածության խթանման ոլորտում իրականացվող երկու ծրագրերի հաջող համագործակցության օրինակ է:

Նախագծի նպատակն էր բացահայտել և զարգացնել Սիրիայից տեղահանված անձանց ու տեղացի կանանց ձեռնարկատիրական գործունեության կարողությունները գինեգործության ոլորտում և խթանել նրանց ինտեգրումը ոլորտում: 1,5-ամյա ծրագիրը ներառում էր 2 հիմնական փուլ՝ գինեգործության և գինու արտադրության վերաբերյալ տեսական ու գործնական գիտելիքների ձեռքբերում և նոր գինիների ինկուբացիա, որն ուղեկցվում էր յուրաքանչյուր մասնակցի համար աշխատավայրում անհատական ուսուցմամբ:

Ծրագրի առաջին փուլում 22 մասնակիցներ կարևոր տեսական գիտելիքներ են ստացել գինու արտադրության և բիզնեսի վերաբերյալ՝ մասնակցելով ICARE-ի «Ի-Վի-Էն» գինու ակադեմիայի մշակած և մատուցած WINMASTER ինտենսիվ վերապատրաստման դասընթացին: Այն կազմվել է «Գինեգործություն և գինու բիզնես» սերտիֆիկացման ծրագրի հիման վրա և մշակվել ՄՀԶ ՄԿՈՒ-ի աջակցությամբ: Երկրորդ փուլը ներառում էր առանձին գինիների ինկուբացիա WINMASTER դասընթացի 6 ամենահաջողակ մասնակիցների համար: Ինկուբացիոն փուլի սկզբնական փուլում «Վայն ֆորմուլա» ՍՊԸ-ի աջակցությամբ յուրաքանչյուր մասնակցի համար մշակվել է գինու անհատական ծրագրի հայեցակարգ: Գինու ինկուբացիան իրականացվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ոսկեհատի ուսումնագիտական կենտրոնում:

Քանի որ գինու նոր բրենդներն ու ընկերություններն արագորեն ընդլայնվում են, ակնկալվում է, որ նախագիծը երկարաժամկետ հեռանկարում աշխատանքի նոր հնարավորություններ կստեղծի նաև այլ անձանց համար: Բացի այդ, նախագծի շնորհիվ գինեգործությունը, որն ավանդաբար համարվում էր «տղամարդկային» մասնագիտություն, դիրքավորվեց և խթանվեց կանանց շրջանում:

During the whole incubation process the selected 6 participants – 3 Syrian Armenians and 3 local women - received on-the-job trainings and were introduced to all practical aspects of wine production, and now 6 new wine brands – Aura, Galar, Lusnak, WineGogh, Dzon and Altunyan – have entered the Armenian market. The project thus allowed promoting winemaking traditionally considered as “male” profession among local women.

As the new wine brands and companies grow and expand the project outcome in the long run will thus be creation of new employment opportunities in the market.

Ընտրված 6 մասնակիցները` 3 սիրիահայեր և 3 տեղացի կանայք, ինկուբացիոն գործընթացի շրջանակում գործնական դասընթացներ են անցել և ծանոթացել գինու արտադրության բոլոր կողմերին, որի արդյունքում գինու 6 նոր բրենդ է մուտք գործել հայաստանյան շուկա` «Աուրա», «Գալար», «Լուսնակ», «Վայն Գոգ», «Ձոն» և «Ալթունյան»:

Քանի որ գինու նոր բրենդներն ու ընկերություններն արագորեն ընդլայնվում են, ակնկալվում է, որ նախագիծը երկարաժամկետ հեռանկարում աշխատանքի նոր հնարավորություններ կստեղծի նաև այլ անձանց համար: Բացի այդ, նախագծի շնորհիվ գինեգործությունը, որն ավանդաբար համարվում էր «տղամարդկային» մասնագիտություն, դիրքավորվեց և խթանվեց կանանց շրջանում:



*Լիանա Մեհրաբյան, «Աուրա» գինիներ*

***«Մայրս միշտ կրկնում էր, որ գինեգործությունը կնոջ համար չէ, այն տղամարդու աշխատանք է: Սակայն ես որոշել եմ ապացուցել, որ կինը ևս կարող է հաջողակ գինեգործ դառնալ և շատ բանի հասնել այս ոլորտում»:***

*Սարգիս Յազջյան, «Լուսնակ» գինիներ*

***«Նոր բիզնեսը երեխայի նման է. այն մեծացնելու և զարգացնելու համար ժամանակ ու ռեսուրսներ են անհրաժեշտ... Ես ուզում եմ իմ բիզնեսը զարգացնել դանդաղ, բայց կայուն քայլերով, քանի որ հայաստանյան շուկան փոքր է: Պետք է համբերատար լինել և համբերությամբ առաջ շարժվել: Մեծ հույսեր չունեմ, որ առաջիկա 2 տարում իմ բիզնեսը շուկայում կգտնի իր տեղը, բայց ակնկալում եմ, որ 5 տարի հետո այն արդեն բավականին հաջողակ կլինի»:***





*Quote: “Liana Mehrabyan (“Aura” wine)*

***“My mom has always repeated that winemaking is not for a woman – it’s a man’s job. However, I’ve decided to prove that a woman can also become a successful winemaker and achieve a lot in this field”.***

*Quote: Sarkis Yazdjian (“Lusnak” wine)*

***“A new business is like a child. It takes time and resources to raise and grow it…I want to develop my business slowly but steadily as Armenia is a small market. We need to be patient and move forward with patience. I don’t have high hopes of having my position in the market in the upcoming 2 years. However, in 5 years my business should already be quite successful”.***

WINES of ARMENIA

*Promoting Armenian wines on the domestic and foreign markets*

*Հայկական գինիների առաջմղումը տեղական և միջազգային շուկաներում*

## *Wine consumption study and development of marketing strategy for promotion of wine culture in Armenia*

Armenia ranks lower in the list of wine consuming countries, while consistently having high indicators among the countries consuming alcohol. However, over the recent years, there have been changes in the general structure of alcohol consumption in Armenia - the share of wine is increasing. Wine consumption per capita has increased significantly over 2018-2019. Thanks to high quality wine producers, festivals, tastings, specialised shops, restaurants and bars, the culture of drinking wine is becoming popular in the country.

However, the spread of the COVID-19 epidemic slowed down the growth of the wine market, and Armenia was no exception. This also resulted in abrupt decline in the tourist flow, who as it turned out were the main consumers of Armenian wines. In Armenia, according to preliminary estimates, wine is more of a social drink than a part of everyday food consumption.

Thus, it was imperative to study the wine consumption culture and habits in Armenia to identify the motives for wine drinking in the Armenian market to further develop a marketing strategy and action plan for more effective internal promotion of wine consumption culture.

**The quantitative research has been conducted among 1638 people throughout Armenia through phone interviews, and the qualitative component included 6 focus-group discussions.**




**phone interviews**

**հեռախոսային հարցազրույցներ**




**focus-group discussions**

**ֆոկուս-խմբային քննարկումներ**

As a result, a marketing strategy and action plan based on the study of the quantitative and qualitative peculiarities of wine consumption in Armenia has been developed and handed over to VWFA for the approval by the Board. The VWFA is currently implementing the strategy and action plan to promote the consumption of Armenian wines in the post-epidemic reality in a structured and coordinated manner.



## *Հայաստանում գինու սպառման ուսումնասիրություն և գինու մշակույթի խթանման մարքեթինգային ռազմավարության մշակում*

Հայաստանը գինի սպառող երկրների ցանկում համեմատաբար ցածր տեղ է զբաղեցնում՝ միաժամանակ բարձր ցուցանիշներ արձանագրելով ալկոհոլ օգտագործող երկրների շարքում: Վերջին տարիներին, սակայն, Հայաստանում ալկոհոլի օգտագործման ընդհանուր ցուցանիշներում փոփոխություններ են տեղի ունեցել, քանի որ գինու տեսակարար կշիռն ավելացել է: 2018-2019 թվականների դրությամբ, մեկ շնչին բաժին ընկնող գինու սպառումը զգալիորեն աճել է: Բարձրորակ գինի արտադրողների, փառատոնների, համտեսների, մասնագիտացված խանութների, ռեստորանների և բարերի շնորհիվ երկրում գինի խմելու մշակույթը մեծ տարածում է ստացել:

Այդուհանդերձ, COVID-19 համավարակի տարածումը դանդաղեցրել է ընդհանուր գինու շուկայի աճը, և Հայաստանը բացառություն չէ: Համավարակը հանգեցրել է նաև զբոսաշրջիկների թվի կտրուկ անկմանը, իսկ նրանք, պարզվում է, հայկական գինիների հիմնական սպառողներն էին: Ըստ նախնական գնահատման՝ Հայաստանում գինին ավելի շատ սոցիալական խմիչք է, քան ամենօրյա սննդակարգի մաս:

Ուստի, անհրաժեշտ էր դառնում Հայաստանում գինու սպառման մշակույթի ու սովորությունների ուսումնասիրությունը և հայկական շուկայում գինի խմելու դրդապատճառների ի հայտ բերումը՝ հետագայում մարքեթինգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր մշակելու և տեղական շուկայում գինու սպառման մշակույթն ավելի արդյունավետ առաջ մղելու նպատակով: **Քանակական հետազոտությունն իրականացվել է 1638 հայաստանցիների շրջանում՝ հեռախոսային հարցազրույցների միջոցով, իսկ որակական բաղադրիչը ներառել է 6 ֆոկուս-խմբային քննարկումներ:**

Արդյունքում, Հայաստանում գինու սպառման քանակական և որակական առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա մշակվել է մարքեթինգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր, որը հանձնվել է Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի խորհրդի հաստատմանը: Ներկայում՝ հետհամավարակային իրականությունում, հիմնադրամը համակարգված կերպով կյանքի է կոչում հայկական գինիների սպառման խթանմանն ուղղված ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը:

**GIZ through its activities does not promote alcohol consumption, warns that excessive consumption of alcohol is harmful to health and argues to drink moderately and responsibly.**

**GIZ-ն իր գործողությունների միջոցով չի խթանում ալկոհոլի սպառումը, զգուշացնում է, որ այն վտանգավոր է առողջության համար ɉ հորդորում է օգտագործել չափավոր քանակով  և պատասխանատու կերպով:**



# *Wines of Armenia umbrella brand: better visibility for Armenia on foreign markets*

WINES of ARMENIA

“Wines of Armenia” project was aimed at studying successful umbrella brands worldwide to create a strong brand identity for Armenian wines. However, only quality-assured Armenian wines will be positioned and promoted globally under this “umbrella”.

Creating strong Wines of Armenia brand is crucial in terms of distinguishing Armenian wines from the competitors and at the same time positioning them in the target markets.

The project thus included a study, data analysis and creation of Wines of Armenia brand.

Wines of Armenia brand used in the international context will also raise awareness of Armenia as an attractive wine tourism destination.

- 6 umbrella brands in wine have been studied and analyzed
- Over 20 interviews, focus-group discussions and workshops held with the sector representatives and experts

As a result, brand ideology, story, and visual identity along with brandbook were handed over to VWFA.

**6**

**umbrella brands**

**հովանոցային բրենդներ**



# *«Հայաստանի գինիներ» հովանոցային բրենդ. ճանաչելիություն միջազգային շուկաներում*

«Հայաստանի գինիներ» նախագծի նպատակն էր ուսումնասիրել հաջողված հովանոցային բրենդներն ամբողջ աշխարհում և համանման ուժեղ բրենդ ստեղծել՝ հայկական որակյալ գինիներն արտերկրում դիրքավորելու և առաջ մղելու համար:
Ծրագիրը ներառում էր ուսումնասիրություն և տվյալների վերլուծություն, ինչպես նաև «Հայաստանի գինիներ» բրենդի մշակում:

Միջազգային համատեքստում օգտագործվող «Հայաստանի գինիներ» բրենդը կբարձրացնի Հայաստանի՝ որպես գինու զբոսաշրջության գրավիչ ուղղության վերաբերյալ իրազեկման մակարդակը:

- Ուսումնասիրվել և վերլուծվել են գինու 6 հովանոցային բրենդներ
- Ավելի քան 20 հարցազրույց, ֆոկուս-խմբային քննարկումներ և աշխատաժողովներ՝ ոլորտի ներկայացուցիչների և փորձագետների հետ

Արդյունքում, բրենդի գաղափարախոսությունը, պատմությունը և արտաքին տեսքը բրենդբուքի հետ միասին հանձնվել են Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին:

**20**

**Interviews**
**focus-group discussions**
**workshops**

**հարցազրույց**
**ֆոկուս-խմբային քննարկումներ**
**աշխատաժողովներ**

## *Setting up a quality assurance and control mechanism for Armenian wines,“Wines of Armenia” blind tasting*

In 2020, GIZ in cooperation with Vine and Wine Foundation piloted the first-ever in Armenia mechanism for quality assurance and evaluation of Armenian wines through a blind-tasting contest.

The wine tasting contest was aimed at creating a gradation system and assessment of wine samples with direct participation of the wine producers as well as independent judges.

The quality assurance system was based on a professionally organised tasting contest with its own rules, guidelines, data generation process, statistical analysis, and reporting systems using best practices from Mundus Vini, OIV and other international competitions. The project also aims to establish a cooperation platform between the wine producers for knowledge transfer and capacity building of all involved actors.

As a result of the first pilot, the wines passing the set score threshold will be marked with a special quality sign – Wines of Armenia watermark- and get benefits such as sales on ***www.winesofarmenia.store*** online e-commerce platform for direct sales of Armenian wines in EU.

This will contribute to positioning of Armenia as a winemaking and wine tourism country through the wines selected by professional jury and tasters.

After the pilot in 2020, the mechanism has been further revised including recommendations and feedback from the state and public partners and the updated version has been presented to wine producers and Vine and Wine Foundation.

Besides, a tailor-made training for all the tasters from wine companies have been organised to prepare and certify those who will be selecting the wines for the Wines of Armenia quality trademark. Thus, only the trained professionals who will eventually be awarded the certificate will be able to judge and evaluate the wines at the blind tasting contest.





## *Հայկական գինիների որակի ապահովման և վերահսկման մեխանիզմի ստեղծում, «Հայաստանի գինիներ» կույր համտես*

2020 թվականին GIZ-ը, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի հետ համագործակցությամբ, Հայաստանում առաջին անգամ փորձարկել է հայկական գինիների որակի ապահովման և գնահատման կույր համտես-մրցույթ մեխանիզմը:

Մրցույթի նպատակն էր գնահատել գինու նմուշները՝ արտադրողների, ինչպես նաև անկախ ժյուրիի անմիջական օգնությամբ:

Որակի ապահովման համակարգը հիմնված է պրոֆեսիոնալ համտես-մրցույթի վրա՝ իր կանոններով, ուղեցույցներով, տվյալների ստեղծման գործընթացով, վիճակագրական վերլուծությամբ և հաշվետվությունների համակարգերով և Mundus Vini, OIV ու միջազգային այլ մրցույթների լավագույն փորձի կիրառմամբ: Նախագիծը նպատակ ունի նաև համագործակցության հարթակ ստեղծել գինի արտադրողների միջև՝ գիտելիքների փոխանակման և ներգրավված բոլոր կողմերի կարողությունների զարգացման համար:

Պիլոտային առաջին ծրագրի արդյունքում, սահմանված միավորների շեմը հաղթահարած գինիները որակի հատուկ նշան ստացան՝ «Հայաստանի գինիներ» լոգոյի տեսքով, և որոշակի առավելություններ ձեռք կբերեն, օրինակ՝ վաճառքի հնարավորություն ***www.winesofarmenia.store*** էլեկտրոնային առևտրի առցանց հարթակի միջոցով, որը նախատեսված է հայկական գինիներն ԵՄ-ում ուղիղ վաճառքի համար:
Այս քայլերը կնպաստեն, որ Հայաստանը դիրքավորվի որպես գինեգործական և գինու զբոսաշրջային երկիր՝ պրոֆեսիոնալ ժյուրիի և համտեսողների կողմից ընտրված որակյալ գինիների միջոցով:

2020 թվականի պիլոտային ծրագրից հետո մեխանիզմը վերանայվել է՝ հաշվի առնելով նաև պետական ու մասնավոր հատվածի գործընկերների առաջարկություններն ու արձագանքները, իսկ թարմացված տարբերակը ներկայացվել է գինի արտադրողներին և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամին:

Բացի այդ, գինեգործական ընկերությունների բոլոր համտեսողների համար անցկացվել է նրանց կարիքներին համապատասխանեցված դասընթաց `նախապատրաստելու և հավաստագրելու նրանց, ովքեր կհամտեսեն և կընտրեն «Հայաստանի գինիներ» որակի ապրանքանիշին համապատասխանող գինիները: Միայն վերապատրաստված և հավաստագրված մասնագետներն, այսպիսով, կկարողանան գնահատել գինիները մրցույթում:






Number of wineries participated
Մասնակցած գինեգործարանների թիվը
36
Number of wineries having at least one wine pass the threshold
Գինեգործարանների թիվը, որոնց առնվազն մեկ գինին հաղթահարել է շեմը
29
Total number of wines
Գինիների ընդհանուր թիվը
161
Number of wines that passed the threshold
Շեմը հաղթահարած գինիների թիվը
83
52%
81%

# *Winesofarmenia.store: e-commerce platform, logistics hub and customer support centre for direct sales of Armenian wines in EU*

companies. The e-commerce website will give an excellent opportunity for the wine companies having no representation in Europe to sell their wines there at competitive prices (because of small volumes of production, it is often difficult for Armenian companies to find partners willing to import their wines into the given market).
Besides, the tourists visiting Armenia, trying Armenian wines will be able to get them in their home countries in Europe through the platform. This will indeed enhance visibility of Wines of

- an online e-commerce platform for direct sales of Armenian wines in Europe,
- a single warehouse based in EU where all the wines presented in the platform will be stored this making transportation in Europe more affordable and accessible for Armenian producers,
- a service centre for providing information and guidance on Armenian wines, how to get them, at what prices etc.

As part of support for visibility and promotion of Armenian wines in the European market, GIZ in cooperation with Vine and Wine Foundation of Armenia has initiated a project “Wines of Armenia Logistics Hub in EU” comprised of 3 components:
The online platform ***www.winesofarmenia.store*** will come to address a number of issues for Armenian wine producing

Armenia brand outside of Armenia’s borders.
All the wines in the platform will undergo strict quality control and assessment through the Wines of Armenia blind-tasting mechanism. The platform is a vivid example of successful private-public cooperation.






# *Winesofarmenia.store. Էլեկտրոնային առևտրի հարթակ, լոգիստիկ պահեստ և սպասարկման կենտրոն՝ ԵՄ-ում հայկական գինիների ուղիղ վաճառքի համար*

***www.winesofarmenia.store*** առցանց հարթակը կլուծի հայկական գինի արտադրող ընկերությունների մի շարք խնդիրներ: Այն հնարավորություն կընձեռի Եվրոպայում ներկայացուցչություն չունեցող գինեգործական ընկերություններին վաճառել իրենց գինիներն այնտեղ մրցունակ գնով (արտադրության փոքր ծավալների

- Եվրոպայում հայկական գինիների ուղիղ վաճառքի համար նախատեսված էլեկտրոնային առևտրի առցանց հարթակ,
- միասնական պահեստ ԵՄ-ում, որտեղ կպահվեն հարթակում ներկայացված բոլոր գինիները և այսպիսով ավելի հեշտ և մատչելի կիրականացվի ԵՄ-ում դրանց տեղափոխումը,
- սպասարկման կենտրոն՝ հայկական գինիների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար՝ ձեռքբերման պայմաններ, գին և այլն:

Եվրոպական շուկայում հայկական գինիների տեսանելիության աճին և առաջմղմանն աջակցելու նպատակով՝ GIZ-ը, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի հետ համատեղ, մեկնարկել է «ԵՄ-ում Հայաստանի գինիների լոգիստիկ կենտրոն» նախագիծը, որը բաղկացած է 3 հիմնական մասից.

պատճառով հայկական ընկերությունները հաճախ դժվարանում են գտնել դրսի գործընկերների, որոնք կցանկանան ներկրել իրենց գինիները):

Բացի այդ, Հայաստան այցելող և հայկական գինիները համտեսող եվրոպացի զբոսաշրջիկները հարթակի միջոցով կկարողանան ձեռք բերել դրանք իրենց հայրենի երկրում: Կայքն իսկապես կօգնի բարձրացնել «Հայաստանի գինիներ» բրենդի ճանաչելիությունն արտերկրում:

Հարթակի բոլոր գինիները որակի խիստ հսկողություն և գնահատում կանցնեն «Հայաստանի գինիներ» կույր համտես-մրցույթ մեխանիզմի միջոցով: Հարթակը հանրային-մասնավոր հաջողված համագործակցության վառ օրինակ է:



# *Vini Armenian Wine Guide*

Vini (https://vini.am/) is a project supported by GIZ with a unique philosophy aimed at promoting the wine culture in Armenia, popularising it in and obtaining official recognition of domestic wines in the international arena.

With the slogan “Every Armenian wine”, Vini’s ultimate mission is to familiarise consumers with every single wine and every wine producer irrespective of its size and capacities in Armenia in a professional manner, taking into account international experience and the cultural spirit of the country.

The project features a comprehensive wine guide, where you can find all the information about Armenian wineries irrespective of their sizes and production volumes, vineyards, wine events, etc.

As part of the project, the website features main wine-growing regions of the country, with autochthonous and selective Armenian grape varieties, as well as presents the unique Armenian terroir as an exceptional area for professional winemaking.

An empirical approach, professional assessment and endless love to wine are the three main engines of the project, which help identify worthy representatives and find hidden works of art.

The VINI project has become the main link between all segments of the wine industry in Armenia (producer, HoReCa, private consumer), thereby bringing them all together on one common platform for one common goal. The first interactive “Wine Map of Armenia” and “Wine Map of Yerevan” have been developed within the project.









# *ՎԻՆԻ հայկական գինու ուղեցույց*

Vini.am-ը GIZ-ի աջակցությամբ ստեղծված նախագիծ է, որն ունի յուրահատուկ փիլիսոփայություն՝ ուղղված գինու մշակույթի զարգացմանը, Հայաստանում այս ըմպելիքի հանրայնացմանն ու միջազգային ասպարեզում հայրենական գինիների պաշտոնական ճանաչման ձեռքբերմանը:

ՎԻՆԻ-ի կարգախոսն է «Հայկական բոլոր գինիները», քանի որ նախագծի նպատակն է սպառողներին պրոֆեսիոնալ կերպով ծանոթացնել Հայաստանի բոլոր գինիների և գինեգործարանների հետ՝ անկախ դրանց չափերից և հնարավորություններից, հաշվի առնելով միջազգային փորձը և երկրի մշակութային ոգին:

Նախագիծը ներկայացնում է համապարփակ գինու ուղեցույց, որտեղ կարող եք տեղեկություններ գտնել հայկական բոլոր գինեգործարանների մասին՝ անկախ դրանց չափերից և արտադրության ծավալներից, խաղողի այգիներից, գինու միջոցառումներից և այլն:

Նախագծի շրջանակում գործարկված կայքը ներկայացնում է երկրի հիմնական գինեգործական շրջանները՝ հայկական տեղածին և միջազգային խաղողի սորտերով, ինչպես նաև յուրահատուկ հայկական տերուարը՝ որպես պրոֆեսիոնալ գինեգործության բացառիկ տարածք:
Էմպիրիկ մոտեցումը, մասնագիտացված գնահատումը և գինու հանդեպ անսահման սերը նախագծի երեք հիմնական շարժիչ ուժերն են, որոնք օգնում են բացահայտել ոլորտի արժանի ներկայացուցիչներին և գտնել հայկական գինեգործության արվեստի թաքնված գործերը:
VINI նախագիծը դարձել է Հայաստանի գինեգործության բոլոր հատվածները (արտադրողներ, HoReCa, մասնավոր սպառողներ) իրար կապող հիմնական օղակը՝ միավորելով բոլորին մեկ ընդհանուր հարթակում՝ մեկ ընդհանուր նպատակի շուրջ: Նախագծի շրջանակում ստեղծվել են առաջին ինտերակտիվ «Հայաստանի գինու քարտեզը» և «Երևանի գինու քարտեզը»:



# *Support for Light Industries in Armenia*

PSD TVET has launched another partnership initiative with the Ministry of Economy of Armenia to promote light industry development. The programme commissioned development of a strategy and action plan for particularly textile and clothing, footwear, and furniture industry in Armenia.

PSD TVTET programme thus supports the Ministry to establish a Light and Creative Industry Department within its structure and Creative Hub Foundation to effectively implement the action plan for light industry development in Armenia.

The concept of the new initiative is based on PSD TVET's relevant 10-year expertise in the wine sector. The programme has applied a successful model of support to the public partner in establishment of Vine and Wine Foundation which is aimed at strengthening institutional capacities of the sector.







# *Աջակցություն թեթև արդյունաբերության զարգացմանը Հայաստանում*

ՄՀԶ ՄԿՈՒ ծրագիրը ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ մեկնարկել է ևս մեկ կարևոր նախաձեռնություն՝ այս անգամ խթանելու թեթև արդյունաբերությունը: Ծրագիրը պատվիրակել է, մասնավորապես տեքստիլի, հագուստի, կոշիկի և կահույքի արտադրության զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակումը:

Այսպիսով, ծրագիրն աջակցում է էկոնոմիկայի նախարարությանը՝ իր կառուցվածքում ստեղծելու Թեթև և ստեղծարար արդյունաբերության վարչություն և «Ստեղծարար արդյունաբերության կենտրոն» հիմնադրամ, որոնք էլ կիրականացնեն Հայաստանում թեթև արդյունաբերության զարգացման գործողությունների ծրագիրը:



Նոր նախաձեռնության հայեցակարգը հիմնված է ծրագրի՝ գինեգործության աջակցության ոլորտում ավելի քան տասնամյա փորձի վրա: Նախկինում ՄՀԶ ՄԿՈՒ-ն կիրառել է պետական գործընկերների աջակցության հաջողված մոդել՝ օժանդակելով Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ստեղծմանը՝ միտված ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացմանը:

***Logistics Sector:***
*Results, facts and figures*

***Լոգիստիկայի ոլորտ.***
*արդյունքներ, փաստեր և թվեր*





**Paruyr Jangulyan, PSD TVET,
Programme Advisor**

**Պարույր Ջանգուլյան, ՄՀԶ ՄԿՈՒ,
Ծրագրի խորհրդատու**

Logistics industry in Armenia is still in the preliminary stages of development. The share of transportation and warehousing services in GDP of Armenia is around 3%. This indicator is fluctuating from 2.34% to 3.22% for 2015-2019 and decreased to 2.28% in 2020.

To address the challenges in the logistics industry in Armenia and prepare systematic and focused interventions, there is a need for an in-depth analysis and overview of the legal framework, institutional landscape, cooperation systems, the capacities, competencies and competitive landscape of the logistics value chain industries and their capacity development needs in cooperation and with the help of public and private stakeholders.

Լոգիստիկայի ոլորտը Հայաստանում դեռ զարգացման նախնական փուլում է: Տրանսպորտային և պահեստային ծառայությունների տեսակարար կշիռը Հայաստանի ՀՆԱ-ում կազմում է շուրջ 3%: 2015-2019 թվականներին այս ցուցանիշը տատանվում էր 2,34%-ից 3,22%-ի սահմանում, իսկ 2020 թվականին նվազել է մինչև 2,28%:

Հայաստանում լոգիստիկ արդյունաբերության մարտահրավերներին դիմակայելու և առկա սահմանափակումներն ու խնդիրները լուծելու համար անհրաժեշտ են համակարգված ու թիրախային միջամտություններ, որոնց նախապատրաստման համար հարկավոր է իրավական դաշտի, ինստիտուցիոնալ և համագործակցային համակարգերի, լոգիստիկ արժեշղթայի ներուժի, իրավասությունների և մրցակցային դաշտի ու համապատասխան կարողությունների զարգացման կարիքների խոր և համապարփակ վերլուծություն՝ պետական և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ:

# *Sector scan and analysis*

Over November 2020 - July 2021, PSD TVET supported the development of logistics sector scan and baseline analysis for Armenia. The main goal of the project was to improve the knowledge base of the logistics industry and market in Armenia and its development needs for the industry stakeholders. This in its turn will serve as a base for the national roadmaps for improving the competitiveness of the industry, creating jobs within the industry, and developing competitive skills and qualification frameworks to ensure competitive and productive labour force.

The study was comprised of individual interviews, focus group discussions, expert interviews, and workshops with over 80 role players of the logistic value chain, including 18 representatives of transport companies, 35 logistic service providers, 20 educational institutions, 19 experts, and 22 farmers from 3 regions of Armenia. The interviews were aimed at understanding stakeholders' internal management problems and challenges, discovering labour market gaps, and reviewing their opinions on market situation and development scenarios.

# *Ոլորտի ուսումնասիրություն և վերլուծություն*

2020 թվականի նոյեմբերից 2021 թվականի հուլիսն ընկած ժամանակահատվածում ՄՀԶ ՄԿՈՒ-ն աջակցել է Հայաստանի լոգիստիկայի ոլորտի ուսումնասիրությանն ու ելակետային հետազոտության մշակմանը: Ծրագրի հիմնական նպատակն էր բարելավել համապատասխան ոլորտի և շուկայի գիտելիքների բազան ու գնահատել դրա զարգացման կարիքները ոլորտի շահագրգիռ կողմերի համար:

Այն, իր հերթին, հիմք կհանդիսանա ազգային ճանապարհային քարտեզների մշակման համար, որոնք ուղղված կլինեն ոլորտում մրցունակության բարելավմանը, աշխատատեղերի ստեղծմանը, մրցակցային հմտությունների և որակավորման շրջանակների զարգացմանը` երաշխավորելու համար մրցունակ և արդյունավետ աշխատուժ:

Հետազոտությունը բաղկացած էր անհատական հարցազրույցներից, ֆոկուս-խմբային քննարկումներից, փորձագետների հարցազրույցներից և վերապատրաստման դասընթացներից լոգիստիկ արժեշղթայի ավելի քան 80 դերակատարների հետ, այդ թվում` տրանսպորտային ընկերությունների 18 ներկայացուցիչներ, 35 լոգիստիկ ծառայություն մատուցողներ, 20 կրթական հաստատություններ, 19 փորձագետներ և 22 ֆերմերներ Հայաստանի 3 մարզերից: Հարցազրույցների նպատակն էր հասկանալ շահագրգիռ կողմերի ներքին կառավարման խնդիրներն ու մարտահրավերները, ուսումնասիրել նրանց կարծիքները շուկայի իրավիճակի ու զարգացման սցենարների վերաբերյալ և բացահայտել աշխատաշուկայի բացերը:



**Thus, the key findings of the analyses are.**

- Armenia ranked 92nd among 160 countries with the latest Logistics Performance Index. The country continuously improves customs administration making exporting faster by allowing the online submission of customs declarations.
- The recent study commissioned by GIZ shows that 50% out of about 40 logistics service providers in Armenia plan to invest in fixed assets (new vehicles and warehousing facilities); about 20% plan to increase the staff; and 9% plan to enlarge geography of operations to overcome COVID-19 side effects.
- Education is a major challenge in the logistics industry. This concerns both lack of educational programs in higher educational institutions, and lack of market-related non-formal education opportunities. Industry role players do not have access to sector-related trainings, seminars, and usually organise staff trainings using their inner resources. As of the estimates, there is a yearly lack of 75 specialists in the transport/logistics sectors.
- To develop the sector, it is recommended to focus primarily on TVET and non-formal educational courses. Among the suggested specialisations for TVET courses are “Logistics Management”, “Warehouse Management” and “Customs Brokerage”.

**Այսպիսով, հետազոտության հիմնական արդյունքներն են.**

- Լոգիստիկայի արդյունավետության վերջին վարկանիշի համաձայն՝ Հայաստանը 160 երկրների շարքում 92-րդն է: Երկիրը շարունակաբար բարելավում է մաքսային վարչարարությունը. մաքսային հայտարարագրերի առցանց ներկայացման շնորհիվ արտահանումը դարձել է ավելի արագ:
- GIZ-ի պատվիրակած վերջին հետազոտությունը վկայում է, որ Հայաստանում լոգիստիկ ծառայություն մատուցող շուրջ 40 ընկերություններից 50%-ը նախատեսում է ներդրումներ կատարել հիմնական կապիտալում (նոր մեքենաներ և պահեստային տարածքներ); մոտ 20%-ը նախատեսում է հաստիքների ավելացում, իսկ 9%-ը նախատեսում է ընդլայնել գործողությունների աշխարհագրությունը՝ հաղթահարելու COVID-19-ի բացասական ազդեցությունները:
- Կրթությունը լուրջ մարտահրավեր է լոգիստիկայի ոլորտում: Այն վերաբերում է ինչպես բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերի, այնպես էլ շուկայի հետ կապված ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների բացակայությանը: Ոլորտի դերակատարներին հասանելի չեն համապատասխան դասընթացներն ու սեմինարները, իսկ անձնակազմի վերապատրաստումները սովորաբար կազմակերպվում են ներքին ռեսուրսների օգտագործմամբ: Հաշվարկների համաձայն՝ տրանսպորտի/լոգիստիկայի ոլորտը տարեկան 75 մասնագետի պակաս ունի:
- Ոլորտի զարգացման համար խորհուրդ է տրվում կենտրոնանալ հիմնականում ՄԿՈՒ-ի և ոչ ֆորմալ կրթական դասընթացների վրա: ՄԿՈՒ դասընթացների համար առաջարկվում են հետևյալ մասնագիտացումները՝ «Լոգիստիկայի կառավարում», «Պահեստի կառավարում» և «Մաքսային միջնորդություն»:

**invest in fixed assets**
ներդրումներ հիմնական կապիտալում



**50%**

**increase the staff**
հաստիքների ավելացում



**20%**

**enlarge geography of operations**
ընդլայնել գործողությունների աշխարհագրությունը



**9%**

Published by:
Deutsche Gesellschaft für
Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Registered offices
Bonn and Eschborn

Private Sector Development and Technical Vocational Education and Training in the South Caucasus (PSD TVET) programme

59 Hanrapetutyan street
0010 Yerevan, Armenia

T +374 10 51 00 64
+374 10 51 00 67

E info@giz.de
I www.giz.de

Responsible experts: Sirvard Amatuni, Arthur Poghosyan (GIZ)

Editing and translation: Tatevik Hovhannisyan

Design and Layout: Lilit Altunyan

Photo Credits: ©GIZ/Tigran Hayrapetyan, Haykaz Saribekyan, One Armenia

Commissioned by: German Federal Ministry for Economic Cooperation and Development (BMZ)

Printing:
Yerevan, March 2022
Printed by: Computer Service

Հրատարակվել է՝ Գերմանիայի միջազգային
համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից
Գրանցված գրասենյակներ՝Բոնն և Էշբորն, Գերմանիա

«Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական
կրթություն և
ուսուցում Հարավային Կովկասում (PSD TVET) ծրագիր

Հանրապետության 59,
Երևան 0010, Հայաստան

Հեռ՝ +374 10 51 00 64
+374 10 51 00 67

Էլ. հասցե՝ info@giz.de
Վեբկայք՝ www.giz.de

Պատասխանատու՝ Սիրվարդ Ամատունի, Արթուր Պողոսյան (ԳՄՀԸ),

Խմբագրում և սրբագրում՝ Տաթև Հովհաննիսյան

Դիզայն՝ Լիլիթ Ալթունյան

Լուսանկարներ՝ ©ԳՄՀԸ Տիգրան Հայրապետյան, Հայկազ Սարիբեկյան, One Armenia

Տպագրված է՝ Երևան, մարտ 2022թ,
Computer Service-ի կողմից

Պատվիրատու՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ)